**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի որոշում

Վարչական գործ թիվ **ՎԴ/0923/05/15**
**2026թ.**

Վարչական գործ թիվ ՎԴ/0923/05/15

Նախագահող դատավոր՝ Ռ. Խանդանյան

Դատավորներ՝ Կ. Ավետիսյան

Հ. Այվազյան

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան) հետևյալ կազմով՝

*նախագահող և զեկուցող* Լ. ՀԱԿՈԲՅԱՆ
Ա. ԹՈՎՄԱՍՅԱՆ
Ռ. ՀԱԿՈԲՅԱՆ
Ք. ՄԿՈՅԱՆ

2026 թվականի նոյեմբերի 13-ին

գրավոր ընթացակարգով քննելով Մելանյա Աղաբեկյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 06.03.2025 թվականի որոշման դեմ՝ վարչական գործով ըստ հայցի Մելանյա Աղաբեկյանի ընդդեմ ՀՀ կադաստրի կոմիտեի Սյունիքի մարզային ստորաբաժանման (այսուհետ՝ Կոմիտե), երրորդ անձինք՝ ՀՀ Սյունիքի մարզի Կապան համայնք, Մինաս Հովակիմյանի իրավահաջորդ Լուսիկ Մկրտչյան՝ Կոմիտեի կողմից Մինաս Հովակիմյանի՝ Սյունիքի մարզի, Սյունիք համայնքի 30.11.2004 թվականին իրավունքների պետական գրանցման միասնական թիվ 09-082-4-2 մատյանի թիվ 000119 համարի տակ կատարված անշարժ գույքի սեփականության իրավունքի պետական գրանցումն անվավեր ճանաչելու պահանջի մասին,

# Պ Ա Ր Զ Ե Տ

**1. Գործի դատավարական նախապատմությունը.**

Դիմելով դատարան՝ Մելանյա Աղաբեկյանը պահանջել է անվավեր ճանաչել Կոմիտեի կողմից Մինաս Հովակիմյանի՝ Սյունիքի մարզի, Սյունիք համայնքի 30.11.2004 թվականին իրավունքների պետական գրանցման միասնական թիվ 09-082-4-2 մատյանի թիվ 000119 համարի տակ կատարված անշարժ գույքի սեփականության իրավունքի պետական գրանցումը:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Հ. Հովհաննիսյան) 22.10.2015 թվականի վճռով հայցը բավարարվել է:

ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի (նախագահող դատավոր՝ Ա. Առաքելյան, դատավորներ՝ Հ. Բեդևյան, Ա. Առաքելյան) 26.05.2016 թվականի որոշմամբ Մինաս Հովակիմյանի վերաքննիչ բողոքը բավարարվել է մասնակիորեն՝ ՀՀ վարչական դատարանի 22.10.2015 թվականի վճիռը բեկանվել է և գործն ուղարկվել է ՀՀ վարչական դատարան՝ ամբողջ ծավալով նոր քննության:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Ա. Ղազարյան) (այսուհետ՝ Դատարան) 22.11.2023 թվականի վճռով հայցը բավարարվել է:

ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 06.03.2025 թվականի որոշմամբ Կոմիտեի և Մինաս Հովակիմյանի իրավահաջորդ Լուսիկ Մկրտչյանի վերաքննիչ բողոքները բավարարվել են՝ Դատարանի 22.11.2023 թվականի վճիռը բեկանվել և գործն ուղարկվել է ՀՀ վարչական դատարան նոր քննության:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Մելանյա Աղաբեկյանը (ներկայացուցիչ՝ Արզուման Ղազարյան):

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

**2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

*Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 144-րդ հոդվածի 1-ին մասը:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.*

Վերաքննիչ դատարանն իրավասու չէր սեփական նախաձեռնությամբ դուրս գալ Դատարանում գործի քննության շրջանակներից, մասնավորապես՝ փոխել հայցի հիմքը և կայացնել դատական ակտ այն իրավական և փաստական հիմքերով, որոնք Դատարանում քննության առարկա չեն դարձվել: Մինչդեռ, Վերաքննիչ դատարանը սեփական նախաձեռնությամբ դուրս է եկել Դատարանում գործի քննության շրջանակից և կայացրել է նոր դատական ակտ՝ դատավարության որևէ փուլում չքննարկված հիմքով:

Վարչական գործի քննության ընթացքում հայցի հիմքը կամ առարկան կարող են փոփոխվել միայն մինչև գործը դատաքննության նշանակելը և այն էլ՝ միայն հայցվորի կողմից: Հայցի հիմքը կամ առարկան փոփոխելը համարվում է հայցվորի իրավունքը, և միայն հայցվորը վարչական գործի քննության ընթացքում իր հայեցողությամբ կարող է որոշել՝

օգտագործել այդ իրավունքը, թե՝ ոչ: Դատարանն իր հերթին կարող է որոշել՝ թույլ տալ հայցի հիմքի կամ առարկայի փոփոխություն, այսինքն՝ բավարարել հայցվորի նման խնդրանքը, թե ոչ: Սա նշանակում է, որ ՀՀ վարչական դատարանը և ՀՀ վերաքննիչ վարչական դատարանն իրավասու չեն իրենց նախաձեռնությամբ փոխել հայցի հիմքը և առարկան, ուստի պետք է գործը քննեն հայցվորի կողմից վկայակոչված հայցի հիմքի և առարկայի շրջանակներում:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է ամբողջությամբ բեկանել Վերաքննիչ դատարանի 06.03.2025 թվականի որոշումը և օրինական ուժ տալ Դատարանի 22.11.2023 թվականի վճռին:

**3. Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.**

Սույն վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

**1)** Մինաս Հովակիմյանի և Կապանի շրջխորհրդի գործկոմի միջև 07.03.1995 թվականին կնքված, նոտարական կարգով վավերացված «Բնակելի տան և տնամերձ հողամասի առուծախի պայմանագիր»-ի համաձայն գործկոմը վաճառել է, իսկ Մինաս Հովակիմյանը գնել է ••••[1] բնակելի տունը /15.0քմ/՝ 300քմ հողամասով **(հատոր 1-ին, գ. թ. 24-25)**:

**2)** Առուծախի պայմանագրի հիման վրա 1995 թվականի մարտ ամսին Մինաս Հովակիմյանին տրվել է սեփականության վկայագիր՝ ••••[2] անհատական բնակելի շենքի նկատմամբ: Ըստ սեփականության իրավունքի վկայականի տվյալների՝ Մինաս Հովակիմյանի սեփականության իրավունքը գրանցվել է 300քմ հողամասի նկատմամբ, նաև 15.0քմ բնակելի մակերեսի նկատմամբ, որի արտաքին չափը կազմել է 24քմ **(հատոր 1-ին, գ. թ. 105)**:

**3)** Անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման թիվ 1791757 վկայականի համաձայն՝ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական 09-082-4-2 մատյանի 000119 համարի տակ 30.11.2004 թվականին գրանցվել է Մինաս Հովակիմյանի սեփականության իրավունքը՝ ••••[3] բնակելի տան /24.0քմ/ և տնամերձ հողամասի /0.07հա/ նկատմամբ **(հատոր 1-ին, գ. թ. 36-45)**:

**4)** Սյունիքի մարզի Սյունիք համայնքի ղեկավարի 02.09.2003 թվականի Սյունիք համայնքի տնտեսական թիվ 1 գրքի գրանցման թիվ 2 քաղվածքի համաձայն՝ Թամարա Ասրյանին հատկացվել է 0.1հա հողամաս, որի վրա առկա է բնակելի տուն օժանդակ շինություններով **(հատոր 1-ին, գ. թ. 31)**:

**5)** Անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման թիվ 1403598 վկայականի համաձայն՝ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական 09-082-4-1 մատյանի 000193 համարի տակ 30.11.2004 թվականին գրանցվել է Թամարա Ասրյանի սեփականության իրավունքը՝ ••••[4] բնակելի տան /150.2քմ/, շինությունների /գոմ՝

[1] Հանդիսանում է անձնական տվյալ
[2] Հանդիսանում է անձնական տվյալ
[3] Հանդիսանում է անձնական տվյալ
[4] Հանդիսանում է անձնական տվյալ

50.0քմ, ծածկեր՝ 51.5քմ և 24.5քմ/ և տնամերձ հողամասի /0.1950քմ/ նկատմամբ **(հատոր 1-ին, գ.թ. 32-35)**:

**6)** Կոմիտեի 22.06.2015 թվականի գրության և դրան կից՝ հերթապահ էլեկտրոնային քարտեզի հատվածի համաձայն՝ Թամարա Ասրյանը և Սյունիք համայնքը 2010-2012 թվականներին դիմել են կադաստրին՝ տեղում ուսումնասիրություններ կատարելու և ճշտելու Թամարա Ասրյանի և Մինաս Հովակիմյանի Սյունիք գյուղում գտնվող անշարժ գույքերի սահմանները: Ուսումնասիրությունների ժամանակ կատարված չափագրումների տվյալները տեղադրվել են Սյունիք համայնքի հերթապահ էլեկտրոնային քարտեզում՝ Մինաս Հովակիմյանի հողամասի մակերեսը 0.0835հա, Թամարա Ասրյանի հողամասի մակերեսը 0.1116հա: Սյունիք համայնքի քարտեզի բնօրինակում առկա է /գծված է/ միայն Թամարա Ասրյանին պատկանող հողամասի հատակագիծ՝ 1950քմ մակերեսով **(հատոր 2-րդ, գ. թ. 19-20)**:

**7)** Կոմիտեի 29.01.2016 թվականի թիվ 84 գրության համաձայն՝ «...Սյունիք համայնքի Սյունիք գյուղում բնակավայրերի 2.19133հա հողամասի (որտեղ տեղադրված են քաղ. Մինաս Հովակիմյանի և Թամարա Ասրյանի բնակելի տները) ճշտված քարտեզը Սյունիք համայնքի էլեկտրոնային քարտեզներում տեղադրելուց հետո Մինաս Հովակիմյանի և Թամարա Ասրյանի հողամասի համադրում առկա չէ: Մինաս Հովակիմյանի հողամասի մակերեսը՝ 0.09095հա: Թամարա Ասրյանի հողամասի մակերեսը՝ 0.13809 հա:»: Գրությանը կից ներկայացվել են Սյունիք համայնքում քաղաքացիներ Մինաս Հովակիմյանին և Թամարա Ասրյանին սեփականության իրավունքով պատկանող բնակելի տների հողամասերի ճշտված հատակագծերի պատճենները **(հատոր 3-րդ, գ. թ. 46-49)**:

**8)** ՀՀ փորձագիտական կենտրոն ՊՈԱԿ-ի փորձագետ Ա. Արսենյանի կողմից 14.05.2018 թվականին կայացված թիվ 28971707 փորձագիտական եզրակացության համաձայն. «(...) թիվ 1791757 վկայականում արտացոլված ՀՀ Սյունիքի մարզի Սյունիք համայնքում գտնվող գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական 09-082-4-2 մատյանի 000119 համարի տակ գրանցված հողամասն ամբողջությամբ ներառված է թիվ 1403598 վկայականում արտացոլված ՀՀ Սյունիքի մարզի Սյունիք համայնքում գտնվող գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական 09-082-4-1 մատյանի 000193 համարի տակ գրանցված հողամասում՝ 5-6, 6-7, 7-8, 8-9 և 9-5 սահմանագծերով պարփակված հատվածում» **(հատոր 5-րդ, գ. թ. 24-26)**:

**4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.**

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքի առկայությամբ՝ նույն հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի իմաստով, այն է՝ առերևույթ առկա է մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտում, քանի որ Վերաքննիչ դատարանի կողմից ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 144-րդ հոդվածի 1-ին մասի խախտման արդյունքում թույլ է տրվել դատական սխալ, որը խաթարել է արդարադատության բուն էությունը, և որը հիմնավորվում է ստորև ներկայացված պատճառաբանություններով.

*Վերոգրյալով պայմանավորված՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ վերաքննության, ինչպես նաև ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի կողմից նոր քննության ծավալ սահմանելու լիազորության իրացման սահմաններին:*

ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք:

ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք:

ՀՀ Սահմանադրության 172-րդ հոդվածի համաձայն՝ վերաքննիչ դատարաններն առաջին ատյանի դատարանների դատական ակտերն օրենքով սահմանված լիազորությունների շրջանակներում վերանայող դատական ատյան են:

«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վերաքննիչ դատարանն օրենքով սահմանված լիազորությունների սահմաններում վերանայում է առաջին ատյանի դատարանների՝ բողոքարկման ենթակա դատական ակտերը:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ վերաքննիչ դատարանում գործերի քննության կարգը, ինչպես նաև վերաքննության սահմանները սահմանվում են օրենքով:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի (այսուհետ նաև՝ Օրենսգիրք) 144-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վերաքննիչ դատարանը դատական ակտը վերանայում է վերաքննիչ բողոքում ներկայացված պահանջի սահմաններում՝ ձեռնարկելով անհրաժեշտ միջոցներ բողոքն ըստ էության քննելու համար:

Օրենսգրքի 145-րդ հոդվածի 2-րդ մասը ՀՀ վերաքննիչ վարչական դատարանին, վարչական դատարանի դատական ակտն ամբողջությամբ կամ մասնակիորեն բեկանելու դեպքում, վերապահում է բեկանված մասով գործը վարչական դատարան՝ նոր քննության ուղարկելու և նոր քննության ծավալը սահմանելու լիազորություն:

Նշված լիազորության իրականացման դեպքում Օրենսգրքի 146-րդ հոդվածի 4-րդ մասի 3-րդ կետի համաձայն՝ ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի որոշման պատճառաբանական մասը պետք է բովանդակի գործի նոր քննության ծավալը կամ նշում այն մասին, որ գործը ենթակա է ամբողջ ծավալով քննության:

Միաժամանակ, Օրենսգրքի 177-րդ հոդվածի 1-ին մասով սահմանվում է, որ ստորադաս դատարանում գործի նոր քննությունն իրականացվում է վերադաս դատարանի որոշման հիման վրա և վերջինիս կողմից սահմանված ծավալով: Այս կարգավորումը վկայում է այն մասին, որ գործը նոր քննության ուղարկելու վերաբերյալ վերադաս դատարանի որոշմամբ սահմանված քննության շրջանակը պարտադիր է ստորադաս դատարանի համար և կանխորոշում է նոր քննության ընթացքում դատարանի դատավարական գործունեության սահմանները:

ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ «(…) Վերաքննությունը հանդիսանում է դատական համակարգի կարևորագույն կառուցվածքային ու ընթացակարգային բաղադրիչը,

որի առանցքային գործառույթը նախ և առաջ ստորադաս դատարանի դատական ակտում թույլ տրված սխալների վերացումն է: (…)

Վերաքննությունը վարչական արդարադատության այն ինստիտուտներից է, որի նպատակն է ապահովել առաջին ատյանի դատարանի դատական ակտերի օրինականության և հիմնավորվածության վերահսկողությունը: Հանդիսանալով իրավական պաշտպանության միջոց՝ վերաքննությունը միաժամանակ ծառայում է անձանց իրավունքների և դատական համակարգում օրինականության պահպանմանը: (…) վերաքննության ինստիտուտի առաջնահերթ նպատակներից է արդարադատության սխալները բացառելը, որոնք կարող են լինել թե՛ իրավական, թե՛ փաստական բնույթի: Իրավական սխալները վերաբերում են նորմերի սխալ կամ ոչ լիարժեք կիրառմանը, իսկ փաստական սխալները վերաբերում են ապացույցների սխալ գնահատմանը կամ անտեսմանը, որոնք կարող են խախտել արդար դատաքննության սկզբունքները: Հետևաբար, վերաքննությունը ենթադրում է դատական սխալների գնահատում: (…) վերաքննիչ դատարանում գործի քննությունը հանդիսանում է ոչ թե նոր, ինքնուրույն դատաքննություն, այլ վերանայում՝ ուղղված առաջին ատյանի դատարանի իրավական գնահատականի ստուգմանը: Այլ կերպ ասած, վերաքննիչ դատարանը գնահատում է՝ արդյոք նախորդ ատյանի դատարանն իր վարույթում թույլ չի տվել դատավարական կամ նյութական իրավունքի նորմերի խախտումներ, որոնք կարող էին ազդել դատական ակտի օրինականության և արդարության վրա: (…) վերաքննությունը չի կարող վերածվել ողջ ծավալով կրկնակի քննության, ինչը կհանգեցնի դատավարական գործընթացի դանդաղեցման և կողմերի իրավունքների խախտման: Նշվածը կանխելու նպատակով օրենսդիրը սահմանել է վերաքննության կարգով բողոքի քննության հստակ շրջանակ, այն է՝ վերաքննիչ դատարանը պետք է ուղղի նախորդ ատյանի դատական սխալները՝ օրենքով կանխորոշված սահմաններում իրականացնելով պատշաճ քննություն: Հետևաբար, վերաքննությունը, լինելով երկրորդ ատյանի դատական վերահսկողության մեխանիզմ, չի հանդիսանում այնպիսի դատական վերանայում, որի շրջանակներում կարող է իրականացվել գործի փաստական քննության լիակատար կրկնություն կամ լրիվ նոր քննություն: (…) վերաքննության սահմանները նպատակ ունեն կանխելու դատավարական ամբողջ գործընթացի անհարկի կրկնությունները, և հատկանշական է, որ վերաքննության սահմանների անցումը կամ դրանց անտեսումը կարող է ինքնին հանգեցնել դատավարության մասնակիցների իրավունքների անհարկի խախտման՝ խաթարելով արդարադատության բուն էությունը և արդյունավետությունը (…)» *(տե՛ս, անհատ ձեռնարկատեր Անդրինե Միրզախանյանն ընդդեմ Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի Արարատյան մաքսատուն-վարչության թիվ ՎԴ/2969/05/20 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 25.09.2025 թվականի որոշումը):*

ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է նաև, որ «(…) ՀՀ վարչական դատավարությունում գործի փաստական հանգամանքներն ի պաշտոնե պարզելու ("ex officio") սկզբունքի ուժով վերաքննիչ դատարանը պարտավոր է ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ վերաքննիչ բողոքի բոլոր հիմքերն ըստ էության քննության առարկա դարձնելու համար՝ անկախ այն հանգամանքից, թե վերաքննիչ բողոքում վկայակոչված այս կամ այն

հիմքը վարչական դատարանում քննարկվել է, թե՝ ոչ: Իսկ այն դեպքում, երբ վերաքննիչ բողոքում վկայակոչված չէ այնպիսի հիմք, որի վերաբերյալ վարչական դատարանում քննություն չի իրականացվել, ապա վերաքննիչ դատարանը չի կարող դուրս գալ վարչական դատարանում գործի քննության շրջանակներից և կայացնել դատական ակտ վերաքննիչ բողոքում չվկայակոչված և վարչական դատարանում քննության առարկա չդարձված հիմքով» *(տես, Ա/Ձ Գևորգ Դավթյանն ընդդեմ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի Մաշտոցի հարկային տեսչության ՀՀ վճռաբեկ դատարանի 30.11.2018 թվականի թիվ ՎԴ/2976/05/15 վարչական գործով որոշումը):*

ՀՀ վճռաբեկ դատարանը, անդրադառնալով գործը նոր քննության ուղարկելու լիազորությանը, արձանագրել է. «բողոքարկվող դատական ակտը բեկանելու և գործը նոր քննության ուղարկելու, ինչպես նաև ստորադաս դատարանում գործի նոր քննության ծավալ սահմանելու վերաբերյալ վարչական վերաքննիչ դատարանի որոշումը պետք է հստակ եզրահանգումներ բովանդակի գործի նախորդ քննության ընթացքում թույլ տրված նյութական և (կամ) դատավարական նորմերի խախտումների և դրանց վերացմանն ուղղված դատավարական գործողությունների վերաբերյալ: Ընդ որում, գործի նոր քննության արդյունքում կայացված վարչական դատարանի դատական ակտը վերաքննության կարգով վերանայելու ընթացքում վարչական վերաքննիչ դատարանը նախ և առաջ պետք է ստուգի, թե վարչական դատարանը գործի նոր քննությունն արդյո՞ք իրականացրել է վերադաս դատական ատյանի կողմից սահմանված ծավալի շրջանակներում, թե՝ ոչ» (*տե՛ս, «Ն. Ռ. Վ. Ա. Դ.» ՍՊԸ-ն ընդդեմ ՀՀ ֆինանսների նախարարության թիվ ՎԴ/0079/05/12 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 30.04.2015 թվականի որոշումը*):

ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է նաև, որ «վարչական դատավարությունում գործի նոր քննության ծավալը պայմանավորված է վերադաս դատական ատյանի կայացրած որոշման պատճառաբանություններով և եզրահանգումներով: Վերջիններս ընդգծում են այն սահմանները, որոնց շրջանակներում պետք է իրականացվի գործի քննությունը դատական ակտի բեկանումից հետո: Այդ դատողությունների և եզրահանգումների բնույթը չի կարող լինել սահմանափակված միայն դատավարական իրավունքի կամ միայն նյութական իրավունքի նորմերի կիրառման շրջանակով: Բողոքի ցանկացած հիմքի և դրանում ներառված ցանկացած փաստարկի վերաբերյալ դատարանի եզրահանգումները կարող են պայմանավորել գործի նոր քննության սահմանները: Հետևաբար, եթե վերադաս դատական ատյանում բարձրացված հարցի վերաբերյալ դատարանը եկել է որոշակի հետևության և դրանով պայմանավորել գործի նոր քննության ծավալը, ապա ստորադաս դատական ատյանում գործի նոր քննությունը պետք է իրականացվի նույն ծավալի շրջանակներում (նույն սահմաններում)» (*տե՛ս, ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի Եղեգնաձորի տարածքային հարկային տեսչությունն ընդդեմ անհատ ձեռնարկատեր Արթուր Հովսեփյանի թիվ ՎԴ3/0011/05/10 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 04.07.2013 թվականի որոշումը*):

ՀՀ վճռաբեկ դատարանը մեկ այլ որոշմամբ արձանագրել է. «(...) նոր քննության վարույթում ապացուցման առարկայի շրջանակը պայմանավորված է վերադաս դատարանի կողմից սահմանված նոր քննության ծավալով: Նոր քննության վարույթում ապացուցման առարկան չի ներառում այն փաստերը, որոնք դուրս են ՀՀ վերաքննիչ վարչական

դատարանի կողմից սահմանված նոր քննության ծավալից: Ըստ այդմ՝ (...) գործի նոր քննության արդյունքում կայացված ստորադաս դատարանի ակտի բողոքարկման դեպքում ՀՀ վերաքննիչ վարչական դատարանը ևս կաշկանդված է նոր քննության ծավալով՝ հաշվի առնելով, մասնավորապես, այն հանգամանքը, որ վերադաս ատյանի կողմից գործի նոր քննության ծավալ սահմանված լինելու դեպքում ՀՀ վերաքննիչ վարչական դատարանը գործի նոր քննության արդյունքում կայացրած դատական ակտի վերաքննության փուլում, ի թիվս այլնի, ստուգում է դատարանի կողմից գործի նոր քննության ծավալը պահպանած լինելու հանգամանքը: Այսինքն՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 177-րդ հոդվածով սահմանված՝ նոր քննության ծավալով սահմանափակված ու կաշկանդված լինելու պահանջը հավասարապես վերաբերում է նաև նոր քննության արդյունքում ՀՀ վարչական դատարանի դատական ակտի դեմ վերաքննիչ բողոքը քննող ՀՀ վերաքննիչ վարչական դատարանին» (*տե՛ս, Գառնիկ Մուրադյանն (իրավանախորդ՝ Եղիշ Մուրադյան) ընդդեմ ՀՀ Լոռու մարզի Սպիտակի համայնքապետարանի (իրավանախորդ՝ Արևաշողի գյուղապետարան) թիվ ՎԴ/3692/05/15 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 01.04.2024 թվականի որոշումը*):

Վերահաստատելով նշված իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ վերաքննիչ վարչական դատարանը սահմանափակված և կաշկանդված է հայցի առարկայով, հիմքերով և վերաքննիչ բողոքի հիմքերով: Ըստ այդմ՝ վերաքննության փուլում քննության առարկա կարող է դառնալ փաստի կամ իրավունքի վերաբերյալ այն վեճը, որը հայցի առարկայի, հիմքերի և/կամ վերաքննիչ բողոքի շրջանակներում է: ՀՀ վերաքննիչ վարչական դատարանը լրացուցիչ փաստական հանգամանքների պարզումը, ապացույցների հետազոտումը կամ դրանց ձեռքբերումը կարող է անհրաժեշտ համարել միայն այն չափով, որքանով դա անհրաժեշտ է բողոքարկված դատական ակտի իրավաչափության ստուգման և վերաքննիչ բողոքի հիմքերի գնահատման համար: Վերաքննության փուլում անթույլատրելի է հայցի առարկայի ընդլայնումը և ըստ այդմ՝ այնպիսի փաստական հանգամանքների պարզումը կամ գործի նոր քննության համար այնպիսի փաստական հանգամանքներ պարզելու անհրաժեշտություն առաջադրելը, որոնք տվյալ հայցի առարկայի շրջանակից դուրս են: Մասնավորապես, վիճարկման հայցի քննության շրջանակներում չեն կարող քննության առարկա դառնալ փաստական հանգամանքներ և/կամ գործի նոր քննության համար չի կարող առաջադրվել այնպիսի փաստական հանգամանքներ պարզելու անհրաժեշտություն, որոնք չեն առնչվում վիճարկման հայցի օբյեկտ հանդիսացող վարչական ակտի ենթադրյալ ոչ իրավաչափությանը և կարող են պարզվել միայն տվյալ գործով չվիճարկվող մեկ այլ վարչական ակտի նկատմամբ առանձին դատական վերահսկողության շրջանակներում: Այլ կերպ՝ գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքների շրջանակը որոշելիս ապացուցման առարկայում չեն կարող ներառվել այնպիսի փաստական հանգամանքներ, որոնք առնչվում են մեկ այլ՝ տվյալ վարչական գործով չվիճարկվող վարչական ակտի ենթադրյալ ոչ իրավաչափությանը:

Վճռաբեկ դատարանը միաժամանակ հարկ է համարում ընդգծել, որ անձի դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրացումն ապահովելու պահանջը թույլ չի տալիս վերաքննության փուլում քննության առարկա դարձնել այնպիսի փաստական

հանգամանքներ կամ գործի նոր քննության համար առաջադրել այնպիսի փաստական հանգամանքներ պարզելու անհրաժեշտություն, որոնք կասկածի տակ են դնում այն վարչական ակտի իրավաչափությունը, որի հիմքով ծագել է հայցվորի՝ տվյալ գործով դատական պաշտպանության ենթակա իրավունքը: Հակառակ դեպքում կվտանգվեն վարչական ակտի իրավաչափության կանխավարկածի, իրավական որոշակիության և անվտանգության սկզբունքները, ինչպես նաև «դեպի վատթարացում շրջադարձի անթույլատրելիության» (*reformatio in peius*) սկզբունքը, որի համաձայն՝ բողոքարկման իրավունքի իրացումը չի կարող բողոք բերած անձի համար իր հայցած դատական պաշտպանության շրջանակում առաջացնել հայցի և/կամ բողոքի հիմքերով չպայմանավորված իրավական անբարենպաստ դրություն, այսինքն՝ բողոք բերող անձի համար ստեղծել մինչև դատական պաշտպանության դիմելը գոյություն ունեցած իրավական կարգավիճակի համեմատ ավելի անբարենպաստ կարգավիճակ:

Վերոհիշյալի հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի կողմից գործը նոր քննության ուղարկելու լիազորությունն իրացնելիս գործի նոր քննության ծավալի սահմանումը չպետք է հանգեցնի այնպիսի դատավարական շրջանակի ձևավորմանը, որը ենթադրում է հայցի առարկայի ընդլայնում կամ փոփոխություն: Այլ կերպ՝ գործը նոր քննության ուղարկելու լիազորությունն իրացնելիս ՀՀ վերաքննիչ վարչական դատարանը չի կարող ձևավորել գործի նոր քննության այնպիսի շրջանակ, որի պայմաններում ստորադաս դատարանից պահանջվում է պարզել տվյալ գործով չվիճարկվող վարչական ակտի իրավաչափությունը որոշող փաստական հանգամանքներ:

**Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշման կիրառումը սույն գործի փաստերի նկատմամբ.**

Սույն վարչական գործը հարուցվել է Մելանյա Աղաբեկյանի կողմից ներկայացված հայցի հիման վրա, որով վերջինս պահանջել է անվավեր ճանաչել Կոմիտեի կողմից Մինաս Հովակիմյանի՝ Սյունիքի մարզի, Սյունիք համայնքի 30.11.2004 թվականին իրավունքների պետական գրանցման միասնական թիվ 09-082-4-2 մատյանի թիվ 000119 համարի տակ կատարված անշարժ գույքի սեփականության իրավունքի պետական գրանցումը:

ՀՀ վարչական դատարանի 22.10.2015 թվականի վճռով հայցը բավարարվել է: Նշված վճիռը ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 26.05.2016 թվականի որոշմամբ բեկանվել և գործն ուղարկվել է ՀՀ վարչական դատարան նոր քննության: Վերջինս որպես նոր քննության ծավալ մատնանշել է հետևյալը. «...գործով օբյեկտիվ ճշմարտությունը բացահայտելու համար անհրաժեշտ է պարզել՝ արդյո՞ք Սյունիքի մարզի, Սյունիք համայնքի 30.11.2004թ. իրավունքների պետական գրանցման միասնական 09-082-4-2 մատյանի 000119 համարի տակ Մինաս Հովակիմյանի անվամբ գրանցված անշարժ գույքը և նրա հարևանությամբ գտնվող Թամարա Ասրյանին պատկանող անշարժ գույքը պետական գրանցում ստացած մակերեսներով առկա են բնության (օբյեկտիվ իրականության) մեջ, թե՝ ոչ, արդյո՞ք Մինաս Հովակիմյանի անվամբ գրանցված անշարժ գույքը համադրվում է Թամարա Ասրյանին պատկանող անշարժ գույքի հետ, թե՝ ոչ:

Նշված փաստերը սույն գործի ճիշտ լուծման համար ունեն էական նշանակություն և Դատարանը դրանք պարզելու համար, չբավարարվելով հայցվորի և պատասխանողի

ներկայացրած փաստարկներով, ապացույցներով և հայտնած տեղեկություններով՝ պետք է ողջամիտ միջոցներ ձեռնարկեր ապացույցներ ձեռք բերելու ուղղությամբ՝ ընդհուպ պետք է բնության (օբյեկտիվ իրականության) մեջ տեղանքի վերաբերյալ ՀՀ Սյունիքի մարզի Սյունիք համայնքից, համապատասխան պետական լիազոր մարմնից և իրավաբանական անձանցից տեղեկություններ պահանջեր, հետազոտեր և գնահատեր, անհրաժեշտության դեպքում գործի քննության ժամանակ ծագող՝ հատուկ գիտելիքներ պահանջող հարցերի պարզաբանման նպատակով (Սյունիք համայնքի 30.11.2004թ. իրավունքների պետական գրանցման միասնական 09-082-4-2 մատյանի 000119 համարի տակ Մինաս Հովակիմյանի անվամբ գրանցված անշարժ գույքի (հողամասի)՝ բնության մեջ տեղանքը որոշելու համար և համադրման հարցը պարզելու համար) իր նախաձեռնությամբ փորձաքննություն նշանակեր, ինչպես նաև կատարեր գործով օբյեկտիվ ճշմարտությունը բացահայտելու համար անհրաժեշտ դատավարական այլ գործողություններ:»:

**Դատարանը** 22.11.2023 թվականի վճռով հայցը բավարարել է՝ պատճառաբանելով, որ *«(...) ստացված փորձագիտական եզրակացությամբ, ընդ որում փորձաքննությունը իրականացվել է երրորդ անձ Մինաս Հովակիմյանի մասնակցությամբ, հաստատվել է, որ Սյունիքի մարզի, Սյունիք համայնքի 30.11.2004թ. իրավունքների պետական գրանցման միասնական 09-082-4-2 մատյանի 000119 համարի տակ Մինաս Հովակիմյանի անվամբ գրանցված անշարժ գույքը և նրա հարևանությամբ գտնվող, հայցվորի մոր՝ Թամարա Ասրյանին պատկանող անշարժ գույքը պետական գրանցում ստացած մակերեսներով առկա են բնության (օբյեկտիվ իրականության) մեջ: Նշված փորձաքննության արդյունքում հաստատվել է նաև, որ Մինաս Հովակիմյանի անվամբ գրանցված անշարժ գույքը համադրվում է Թամարա Ասրյանին պատկանող անշարժ գույքի հետ, մասնավորապես թիվ 1791757 վկայականում արտացոլված ՀՀ Սյունիքի մարզի Սյունիք համայնքում գտնվող գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական 09-082-4-2 մատյանի 000119 համարի տակ գրանցված հողամասն ամբողջությամբ ներառված է թիվ 1403598 վկայականում արտացոլված ՀՀ Սյունիքի մարզի Սյունիք համայնքում գտնվող գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական 09-082-4-1 մատյանի 000193 համարի տակ գրանցված հողամասում՝ 5-6, 6-7, 7-8, 8-9 և 9-5 սահմանագծերով պարփակված հատվածում:*

*(...) Ամբողջ վերոգրյալի հիման վրա Դատարանը եզրակացնում է, որ վիճարկվող պետական գրանցումը կատարվել է օրենսդրական նորմերի և կանոնների խախտումներով, վիճարկվող վարչական ակտի կայացման արդյունքում հայցվորի և երրորդ անձի գույքերի կազմում առաջ եկած համադրմամբ խախտվել են հայցվորի իրավունքներն ու օրինական շահերը, վերջինիս համար ոչ իրավաչափորեն առաջացել է ժառանգություն ստացած գույքի նկատմամբ իր իրավունքների պետական գրանցումը կատարելու արգելք, հայցվորը զրկվել է իր գույքը սեփական հայեցողությամբ ազատ տնօրինելու և տիրապետելու իրավունքներից (...)»:*

**Վերաքննիչ դատարանի** 06.03.2025 թվականի որոշմամբ Կոմիտեի և երրորդ անձ Մինաս Հովակիմյանի իրավահաջորդ Լուսիկ Մկրտչյանի վերաքննիչ բողոքները բավարարվել են. Դատարանի 22.11.2023 թվականի վճիռը բեկանվել է և գործն ուղարկվել է ՀՀ վարչական դատարան նոր քննության այն պատճառաբանությամբ, որ *«(...) Անշարժ*

*գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի պետական գրանցման 30.11.2004 թվականի թիվ 1403598 վկայականի համաձայն՝ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական 09-082-4-1 մատյանի 000193 համարի տակ 30.11.2004 թվականին գրանցվել է Թամարա Ասրյանի սեփականության իրավունքը՝ ••••[5] բնակելի տան /150.2 քմ/, նաև շինությունների /գոմ՝ 50.0 քմ, ծածկեր՝ 51.5 քմ և 24.5 քմ/ և տնամերձ հողամասի /0.195 հա/ նկատմամբ: Որպես նշված անշարժ գույքի ձեռքբերման իրավունքը հաստատող փաստաթուղթ վկայականում նշված է Սյունիքի մարզի Սյունիքի համայնքի տնտեսական թիվ 1 գիրք, գրանցման թիվ 2 քաղվածք: Մինչդեռ, ուսումնասիրելով Սյունիքի մարզի Սյունիք համայնքի ղեկավարի 02.09.2003 թվականի Սյունիք համայնքի տնտեսական թիվ 1 գրքի գրանցման թիվ 2 քաղվածքը՝ Վերաքննիչ դատարանը փաստում է, որ համաձայն դրա՝ Թամարա Ասրյանին հատկացվել է 0.1 հա հողամաս, որի վրա առկա է բնակելի տուն օժանդակ շինություններով:*

*Բացի այդ, Թամարա Ասրյանին 25.12.1997 թվականին տրված հողի սեփականության իրավունքի ակտի համաձայն՝ վերջինիս սեփականության իրավունքով հատկացվել է 0.10 հա Սյունիքի մարզի Սյունիք գյուղի հողերից՝ համաձայն հողային ռեֆորմի և սեփականաշնորհման տեղական հանձնաժողովի 1991 թվականի հոկտեմբերի 22-ի թիվ 6 արձանագրության:*

*Միևնույն ժամանակ, Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ վարչական գործի նյութերում առկա է նաև «Технический паспорт на жилой дом индивидуального жилищного фонда» փաստաթուղթը՝ թվագրված 1990 թվականի փետրվար ամսով, որում նշված է հողամաս՝ 768,0 քմ, նաև հետևյալը. «Համաձայն բնակելի տան առուծախի պայմանագրի 23.04.1990թ»: Իր հերթին վարչական գործում առկա բնակելի տան առուծախի 23.04.1990 թվականի պայմանագրի համաձայն՝ Ռուֆա Խաչատուրի Առաքելյանը Թամարա Ներսեսի Ասրյանին վաճառել է բնակելի տուն՝ բաղկացած 52.8 քմ բնակելի և 33.7 քմ օժանդակ մակերեսներից, որը գտնվում է 768 քմ հողամասի վրա:*

*Այսպես, վերոնշյալ փաստաթղթերի առկայության պայմաններում Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ որևէ կերպ պարզ չէ ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից 30.11.2004 թվականին Թամարա Ասրյանի անվամբ իրականացված անշարժ գույքի սեփականության իրավունքի պետական գրանցմամբ 0.195 հա հողամաս գրանցելը, այլ կերպ ասած՝ հողամասի հենց այդ չափով գրանցումը, քանզի, ինչպես արդեն իսկ արձանագրվել է, վկայականում որպես անշարժ գույքի ձեռքբերման իրավունքը հաստատող փաստաթուղթ նշված է Սյունիքի մարզի Սյունիքի համայնքի տնտեսական թիվ 1 գիրք, գրանցման թիվ 2 քաղվածք, որի համաձայն՝ Թամարա Ասրյանին հատկացվել է 0.1 հա հողամաս:*

*Այսպես, Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ թեև Դատարանը սույն գործի նոր քննության ընթացքում փորձաքննություն նշանակելու արդյունքում պարզել է այն, որ Մինաս Հովակիմյանի անվամբ գրանցված անշարժ գույքը համադրվում է Թամարա Ասրյանին պատկանող անշարժ գույքի հետ, մասնավորապես՝ թիվ 1791757 վկայականում արտացոլված ՀՀ Սյունիքի մարզի Սյունիք համայնքում գտնվող գույքի նկատմամբ իրավունքների*

[5] Հանդիսանում է անձնական տվյալ

*պետական գրանցման միասնական 09-082-4-2 մատյանի 000119 համարի տակ գրանցված հողամասն ամբողջությամբ ներառված է թիվ 1403598 վկայականում արտացոլված ՀՀ Սյունիքի մարզի Սյունիք համայնքում գտնվող գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական 09-082-4-1 մատյանի 000193 համարի տակ գրանցված հողամասում՝ 5-6, 6-7, 7-8, 8-9 և 9-5 սահմանագծերով պարփակված հատվածում, այդուհանդերձ, Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ սույն վեճի լուծման համար էական նշանակություն ունի անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի պետական գրանցման 30.11.2004 թվականի թիվ 1403598 վկայականում Թամարա Ասրյանի անվամբ հենց 0.195 հա հողամասի գրանցման հիմքերի պարզմանն ուղղված համապատասխան գործողությունների իրականացումը և ձեռք բերված հնարավոր ապացույցների և դրանց հետազոտման արդյունքում այդ հարցի վերաբերյալ եզրահանգումների համադրումը հիշյալ փորձաքննության արդյունքների հետ՝ պարզելու համար սույն գործով վիճարկվող՝ երրորդ անձի անվամբ իրականացված պետական գրանցմամբ հայցվորի իրավունքների խախտման փաստի առկայությունը/բացակայությունը, ինչը սույն դեպքում Դատարանը չի իրականացրել: Այլ կերպ ասած՝ բողոքարկվող վճռի ուսումնասիրությունը վկայում է այն մասին, որ սույն գործով վեճի լուծումը Դատարանը պայմանավորել է միայն համադրման փաստի առկայությամբ/բացակայությամբ, մինչդեռ, Վերաքննիչ դատարանը գտնում է, որ սույն վեճի լուծման համար Դատարանը պետք է գնահատման առարկա դարձներ հանգամանքն առ այն, որ հայցվորի իրավահաստատող փաստաթղթերում և վկայականում առկա են վերը հիշատակված անհամապատասխանությունները, և ձեռնարկեր Վերաքննիչ դատարանի կողմից վերը նշված գործողությունները, ինչը, սակայն, Դատարանը չի իրականացրել:*

*(…) Այսպիսով, ամբողջ վերոգրյալի հիման վրա Վերաքննիչ դատարանը գալիս է այն եզրահանգման, որ տվյալ դեպքում չեն պարզվել գործի լուծման համար էական նշանակություն ունեցող վերոհիշյալ փաստերը, ուստի հիմք ընդունելով Վերաքննիչ դատարանի՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 145-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված լիազորությունը՝ Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ վճիռը պետք է բեկանել և գործն ուղարկել նոր քննության՝ հաշվի առնելով սույն որոշմամբ ամրագրված պատճառաբանությունները (…)»:*

Վերոգրյալ իրավական դիրքորոշումների լույսի ներքո անդրադառնալով Վերաքննիչ դատարանի պատճառաբանությունների հիմնավորվածությանը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը:

Վերը նշված դատական ակտերի ուսումնասիրության արդյունքում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի կողմից 26.05.2016 թվականի որոշմամբ նոր քննության համար առաջադրվել է հետևյալ փաստերը պարզելու անհրաժեշտությունը. արդյոք բնության մեջ գոյություն ունեն խնդրո առարկա հողամասերը՝ *«պետական գրանցում սպրացած մակերեսներով»,* և արդյոք դրանք համադրվում են: Ըստ այդմ՝ թիվ ՎԴ/3692/05/15 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 01.04.2024 թվականի որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումներին համապատասխան՝ սույն գործով Վերաքննիչ դատարանից պահանջվում էր պարզել՝ արդյոք ՀՀ վերաքննիչ

վարչական դատարանի կողմից ուղենշված նոր քննության ծավալում ներառված նշված փաստերի առկայության վերաբերյալ Դատարանը կատարել է իրավաչափ եզրահանգումներ:

Մինչդեռ, Վերաքննիչ դատարանը, թիվ ՎԴ/3692/05/15 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 01.04.2024 թվականի որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումներին համապատասխան սահմանափակված և կաշկանդված լինելով ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 26.05.2016 թվականի որոշմամբ սահմանված նոր քննության ծավալով, քննության առարկա է դարձրել հայցվորի հողամասի նկատմամբ կատարված իրավունքի պետական գրանցման և դրա հիմքում ընկած իրավահաստատող փաստաթղթերի համապատասխանության հարցը և որպես նոր քննության ծավալ սահմանել այդ համապատասխանության փաստի պարզումը: Այսինքն՝ շեղվելով թիվ ՎԴ/3692/05/15 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 01.04.2024 թվականի որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումներից՝ Վերաքննիչ դատարանը քննության առարկա է դարձրել ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 26.05.2016 թվականի որոշմամբ սահմանված նոր քննության ծավալում չներառված փաստեր: Ընդ որում՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում ընդգծել, որ ՀՀ վերաքննիչ վարչական դատարանը 26.05.2016 թվականի որոշմամբ շեշտադրել է, որ գործի նոր քննության շրջանակներում խնդրո առարկա հողամասերի բնության մեջ գոյության և համադրման փաստերը ենթակա են պարզման հիմք ընդունելով խնդրո առարկա հողամասերի այն չափերը, որոնց վերաբերյալ առկա է իրավունքի պետական գրանցում:

Ավելին, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանը, նոր քննության համար առաջադրելով Թամարա Ասրյանի հողամասի նկատմամբ իրավունքի պետական գրանցման և դրա հիմքում ընկած իրավահաստատող փաստաթղթերի համապատասխանությունը պարզելու անհրաժեշտությունը, կասկածի տակ է դրել Թամարա Ասրյանի իրավունքի պետական գրանցման իրավաչափությունը և գործել է ի խախտումն վերջինիս իրավունքի պետական գրանցման՝ որպես վարչական ակտի իրավաչափության կանխավարկածի՝ դուրս գալով նաև սույն գործով հայցի առարկայի և հիմքերի շրջանակներից:

Այսպես, սույն գործով հայցի առարկան 30.11.2004 թվականին կատարված՝ երրորդ անձ Մինաս Հովակիմյանի իրավունքի պետական գրանցումն անվավեր ճանաչելու պահանջն է: Հետևաբար, սույն գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստերը կարող են վերաբերել միայն պատասխանողի՝ Կադաստրի այն վարքագծին, որը վերջինս դրսևորել է նշված իրավունքի պետական գրանցումը կատարելիս: Այլ կերպ՝ նշված իրավունքի պետական գրանցման իրավաչափությունը վիճարկելու հայցի շրջանակներում քննության առարկա կարող են դառնալ միայն այն փաստական հանգամանքները, որոնք կարող են վկայել Մինաս Հովակիմյանի իրավունքի պետական գրանցումը կատարելիս օրենքի խախտման և հայցվորի իրավունքների խախտման մասին: Նույնիսկ եթե սույն գործով վեճի օբյեկտիվ լուծման համար անհրաժեշտ էր պարզել Թամարա Ասրյանի հողամասի նկատմամբ իրավունքի պետական գրանցման և դրա հիմքում ընկած իրավահաստատող փաստաթղթերի միջև ենթադրյալ անհամապատասխանության առկայությունը (բացակայությունը), ապա այդ փաստը կարող է պարզվել բացառապես Թամարա Ասրյանի

իրավունքի պետական գրանցման իրավաչափությունը որևէ այլ սուբյեկտի (մասնավորապես, սույն գործով երրորդ անձի) կողմից այլ հայցի շրջանակներում վիճարկվելու դեպքում: Սույն գործով 30.11.2004 թվականին կատարված՝ Թամարա Ասրյանի սեփականության իրավունքի պետական գրանցումը վիճարկման հայցի օբյեկտ չի հանդիսանում, հետևաբար սույն գործի շրջանակներում չեն կարող քննության առարկա դարձվել այնպիսի փաստեր, որոնք վերաբերում են վերջինիս իրավաչափությանը և նոր քննության համար չեն կարող առաջադրվել այնպիսի հարցադրումներ, որոնք կասկածի տակ են դնում սույն գործով վիճարկման հայցի օբյեկտ չհանդիսացող՝ Թամարա Ասրյանի իրավունքի պետական գրանցման իրավաչափությունը:

Վերոհիշյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանի կողմից նոր քննության համար առաջադրված հարցադրումն իր բովանդակությամբ դուրս է վիճարկվող վարչական ակտի իրավաչափության գնահատման համար անհրաժեշտ փաստական հանգամանքների շրջանակից:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանը, նոր քննության համար առաջադրելով Թամարա Ասրյանի իրավունքի պետական գրանցման և դրա հիմքում ընկած իրավահաստատող փաստաթղթերի համապատասխանության հարցը պարզելու անհրաժեշտությունը, դուրս է եկել ինչպես սույն հայցով վիճարկվող վարչական ակտի իրավաչափության գնահատման, այնպես էլ վերաքննության սահմաններից:

Ամբողջ վերոգրյալի հիման վրա՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ Վերաքննիչ դատարանի կողմից թույլ է տրվել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 144-րդ հոդվածի խախտում, որը խաթարել է արդարադատության բուն էությունը:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքերի առկայությունը Վճռաբեկ դատարանը համարում է բավարար՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 150-րդ, 152-րդ և 163-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու և գործը ՀՀ վերաքննիչ վարչական դատարան նոր քննության ուղարկելու համար: Նոր քննության շրջանակներում անհրաժեշտ է անդրադառնալ Վերաքննիչ դատարանի բողոքարկվող որոշմամբ չքննարկված՝ վերաքննիչ բողոքի հիմքերին, մասնավորապես, վերաքննիչ բողոքում երրորդ անձ Մինաս Հովակիմյանի իրավահաջորդը փաստարկել է, որ «(...) թե՛ հայցվորի հանգուցյալ մոր, թե՛ Մինաս Հովակիմյանին սեփականության իրավունքով պատկանող անշարժ գույքերի նկատմամբ իրավունքների պետական գրանցումն իրականացվել է նույն օրը, (...) և ըստ էության թե՛ հայցվորի, թե Մինաս Հովակիմյանի սեփականության իրավունքների պետական գրանցումներն իրենց բովանդակությամբ հանդիսացել են իրավունքների առաջին պետական գրանցում՝ վերջիններիս սեփականության իրավունքով փաստացի գոյություն ունեցող հողամասերի սահմաններով, սակայն ըստ էության քարտեզագրման աշխատանքների սխալմունքով: Սակայն Դատարանի կողմից այդ հանգամանքները անտեսվել են և առհասարակ գնահատականի չեն արժանացել: (...) ինչպե՞ս կարող էր Մինաս Հովակիմյանի անվամբ կատարված սեփականության իրավունքի պետական գրանցումը հանդիսանալ հայցվորի իրավունքների խախտմամբ պետական գրանցում, եթե երկու հարևանների իրավունքների պետական գրանցումը կատարվել է նույն օրը (...): Կադաստրային գործում առկա է Սյունիք համայնքի ղեկավարի 2012 թվականի գրություն, որի համաձայն կադաստրային քարտեզագրման աշխատանքների ժամանակ տեղի է ունեցել սխալմունք, և Մինաս Հովակիմյանի հողամասը սխալմամբ ընդգրկվել է Թամարա Ասրյանի

հողամասի սահմաններում: Ըստ այդմ Սյունիք համայնքում կադաստրային քարտեզագրման ժամանակ Թամարա Ասրյանին պատկանող անշարժ գույքի և սահմանակից անշարժ գույքերի քարտեզագրման ժամանակ տեղի ունեցած սխալների պատճառով ուղղումների կատարման անհրաժեշտություն է առաջացել (...)»: Վերաքննիչ բողոքում երրորդ անձ Մինաս Հովակիմյանի իրավահաջորդը, ելնելով երկու հողամասերի ծածկագրերից, նշել է նաև, որ Մինաս Հովակիմյանի իրավունքը գրանցվել է մինչև Թամարա Ասրյանի իրավունքի գրանցումը, որպիսի պայմաններում Մինաս Հովակիմյանի իրավունքի գրանցմամբ չէր կարող խախտվել հայցվորի իրավունքը:

**5. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ.**

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 56-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կողմը, որի դեմ կայացվել է վճիռ, կամ որի բողոքը մերժվել է, կրում է Հայաստանի Հանրապետության դատական դեպարտամենտի՝ վկաներին և փորձագետներին վճարած գումարների հատուցման պարտականությունը, ինչպես նաև մյուս կողմի կրած դատական ծախսերի հատուցման պարտականությունը այն ծավալով, ինչ ծավալով դրանք անհրաժեշտ են եղել դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար: Դատական պաշտպանության այն միջոցի հետ կապված ծախսերը, որ իր նպատակին չի ծառայել, դրվում են այդ միջոցն օգտագործած կողմի վրա, անգամ եթե վճիռը կայացվել է այդ կողմի օգտին:

Վճռաբեկ դատարանը, նկատի ունենալով այն, որ վճռաբեկ բողոքը ենթակա է բավարարման, և գործն ուղարկվում է նոր քննության, գտնում է, որ տվյալ պարագայում դատական ծախսերի բաշխման հարցին պետք է անդրադառնալ գործի նոր քննության ընթացքում:

Հաշվի առնելով վերը շարադրված հիմնավորումները և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-171-րդ հոդվածներով, 172-րդ հոդվածի 1-ին մասով՝ Վճռաբեկ դատարանը

**Ո Ր Ո Շ Ե Ց**

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Բեկանել ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 06.03.2025 թվականի որոշումը և գործն ուղարկել ՀՀ վերաքննիչ վարչական դատարան՝ նոր քննության:

2. Դատական ծախսերի բաշխման հարցին անդրադառնալ գործի նոր քննության ընթացքում:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և բողոքարկման ենթակա չէ:

*Նախագահող և զեկուցող* ***Լ. ՀԱԿՈԲՅԱՆ***

***Ա. ԹՈՎՄԱՍՅԱՆ***

***Ռ. ՀԱԿՈԲՅԱՆ***

***Ք. ՄԿՈՅԱՆ***